

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ԶՈՒՄՈՒՊՈՎ Բ.Օ., ՅԱՅՐԱՐԱԼԻԵՎ Ա.Ա., ՄԱՍՔԵԹԱԼԻԵՎ Բ.Ս.

Ղըրղզստանի միջազգային համալսարան, Բիշկեկ, Ղըրղզստան

Աշխատանքի նպատակն է՝ բանվորական ծանրաբեռնվածության գնահատման համար մշակել Տյան-Շանի հանքերում զբաղված, հանքափորների հանգստի և օպտիմալ աշխատանքային ռեժիմը և ֆիզիոլոգիական հիմունքները:

Յետազոտման մեթոդները

Լեռների տարբեր տեղանքների բարձրություններում աշխատողների ֆիզիոլոգիական մեթոդները, ֆիզիկական աշխատանքը բնութագրող հզորությունը, գազափոխանակությունը և հանքափորների թթվածնային համակարգի վիճակը չափվել են համեմատաբար հանգստի պայմաններում, աշխատանքի 5 րոպեի ընթացքում և մոտակա վերականգնման ժամանակահատվածում:

Արդյունքները

Տյան-Շանի լեռների տարբեր բարձրությունների վրա և տարբեր ինտենսիվությամբ աշխատանքային օպերացիաների ժամանակ էներգաշրջանառության մակարդակները չեն գերազանցում տատանումների սահմանները, որոնք դիտարկվել են այլ հեղինակների կողմից՝ աշխատանքային գործունեության կարգավիճակի ուսումնասիրության համար:

Ծովի մակերևույթից աճող բարձրությունը հանքափորների էներգիայի ծախսումը և նրանց մաքսիմալ հնարավորությունների բաժինը աշխատանքային ժամերի ընթացքում իջնում է: Ֆիզիոլոգիական չափաբաժինների վերականգնման ժամանակ երկարում է:

Եզրակացություն

Բարձր լեռնային (ծովի մակերևույթից 2500 մ բարձրություն) պայմաններում աշխատանքի դժվարությունը պետք է գնահատել ոչ միայն էներգիայի ծախսման մեծացմամբ, նաև աշխատանքի ժամանակ մաքսիմալ աերոբ ունակությամբ, միաժամանակ՝ վերականգնման շրջանի տևողությամբ:

Ստացված արդյունքների հիման վրա կատարվել է ճշգրտումներ աշխատանքային աստիճանի ծանրության դասակարգման և լեռների տարբեր բարձրության ծանրաբեռնվածության պայմաններում:

Այս ճշգրտումները ծառայել են հաշվելու հանքափորների աշխատավարձի հիմնական հաշվարկների գործակիցները՝ կախված եղանակի (լեռների բարձր տեղանք, թթվածնի մասնակի ճնշում, ջերմաստիճան և այլն) և ադմինիստրատիվ գործոններից (աշխատանքային հերթափոխ, հեռավորություն տանից և այլն):